07.11.23 - 09.11.23
11:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակ

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի համագործակցությամբ **ս.թ. նոյեմբերի 7-9-ը ԵՊՀ-ում** կանցկացվեն «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի օրերը։

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի թիմը երեք օր շարունակ՝ ժամը 11։00–15։00-ն, ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում կկազմակերպի կրթական քուիզներ, թեմատիկ խաղեր, որոնք կուղեկցվեն մրցանակներով և անակնկալներով։ Միաժամանակ բոլոր հետաքրքրվողները տեղում կծանոթանան հիմնադրամում առկա կարիերայի հնարավորություններին։

Օրակարգում՝

- կրթական քուիզ և խաղարկություն,
- «Արդյոք ովքե՞ր են» խաղ, որի հաղթողները կստանան նվեր քարտեր,
- «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի հեղինակային «Մայրենիք» խաղը (միայն նոյեմբերի 7-ին՝ ժամը 16։00-17։30),
- «Երեք ընկեր, մեկ նպատակ» պանելային քննարկում (Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ),
- կարիերայի հնարավորություններ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ում (կրթաթոշակ, կամավորություն և փորձնակություն)։

Գրանցվելու համար անցնել հետևյալ հղումով՝ https://www.tfaforms.com/5095043

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am